

տուած զգեստները, կը նայի հայելիին մէջ եւ կը զմայլի իր գեղեցկութիւնով: Հոն ալ դրամը Նանան բոզ ըրաւ, հոս ալ Գատը-գիւղի մենձ աղայի գաւակը, իր սեփական մօր ձեռնտուութիւնով լքեց ու դուրս նետեց գաւառացի հայուհին: Եւ ո՛վ գիտէ թէ ան ալ Նանա մը չէր ըլլար եթէ յարմար պարագաներ ներկայանային:

Այրին սիրավէպ չէ, այլ հայ պանդուխտի կեանքն է, աւելին եւս, – պանդխտութեան հարցն է: Այդ նոյն հարցը երգած է կովկասեան մեղուն, – Լէօն՝ իր երիտասարդական գրուածքներէն մէկուն մէջ, *Պանդուխտը*²⁸: Երգած է Մելիք Շահնազարեան *Հայ գիւղացու սեւ օրը*²⁹ վէպով. բայց եւ ոչ մէկը Զօհրապի տաղանդը, անոր գեղարուեստագէտի ճաշակն ու կարողութիւնը ցոյց տուած չէ:

Կը կարդանք Բերայի Շիտակի մեծ վաճառատան մը մէջ ծառայ վարձուած հայաստանցի գաղթականի մը սիրային արկածները, անոր ընկերոջ վերադարձը դէպի Հայրենիք, անոր կնոջ լացն ու կսկիծը, ու ակամայ միտքերնիդ կ'իյնայ թշուառ հայութիւնը, գաղթողներու ետեւէն երգող այրիներու եւ անտէր մնացած որբերու աղերսանքը:

Զօհրապի գրած ամէն մէկ նորավէպը գոհար մըն է – գեղեցիկ գողտրիկ, հոգեբանօրէն ճշմարիտ: Ծայրէ ծայր կը կարդաք Զօհրապի գործերը եւ հոն կը տեսնաք Պոլիսը իր բոլոր կողմերով: Զօհրապ ինքը Պոլիսն է, – թէ իր բոլոր թերութիւններով ու բոլոր սքանչելիքներով...

Զօհրապ հին սերունդի ամէնէն աւելի կատարեալ թիփն է, ան տուեր է ինչ որ կրնայ տալ: Երիտասարդ սերունդը եւ կեանքի նոր պահանջները կ'ըղձան նոր Զօհրապի մը: Զօհրապ մը որ հինի պէս մեծ ուժով, մեծ տաղանդով երգէ նորը, աշխատանքի երգը: Հին Զօհրապը քաղքենին, միջակորեարը երգեց, անոր պատկերները ցուցադրեց իր բոլոր ժահրոտ կողմերով, նորը կ'ուզենք որ ցուցադրէ նո՛ր սերունդը: